

Ռ.Ա. ՊՈԽՃԿԻՆ




# ՔԱՅՄ ԴԵՒՐԻՉԻՆ



ՅԵՎ ՅՈՐ



ՔԱԶԵՐԸ



ՀՐԱՄԱԳՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊՈՍՏՈՎ. ԴՈՆ—1938

30 MAY 2011

891.715

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

Դ-97

ՔՆԱԾ ԴԵԽՈՒՀԻՆ ՅԵՎ  
ՅՈԹ ՔԱԶԵՐԸ




Թարգմանություն Աթ. ԽՆԿՈՅՑՆԻ

ՌՈՒՍՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՀԱՆ «ԲՈԼՏԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՒՍՈՎ-ԴՈՒ-1938

23 JUL 2013

4925



Մնաս բարով ասելով  
Թագավորը թագուհուն՝  
Գնաց. չեկավ մի տարով:  
Թագուհին եր, որնիրուն,  
Առավոտից իրիկուն,  
Առագաստում կենտ նստած,  
Լուսամուտին աշխ հառած,  
Հսպասում եր, սպասում  
Յեվ աշքերը վընասում:  
Աշքերն ենքան նայեցին,  
Վոր նայելուց ցավեցին:  
Չըկա, չըկա հոգյակը,  
Միրտն ե այրում փափագը:  
Միայն բուքն ե խիստ հուզվում,  
Զյունն ե գալիս ու դիզվում.  
Ինն ամիսն ե հա անցնում,  
Առագաստում թագուհին  
Չըորհնեքի սուրբ տոնին  
Պառկում բերում մի աղջիկ,  
Ինչպես վարդի մի փնջիկ:

Առավոտուն, լուս ու մուժ,  
Արքան յեկավ. ինչ ոգուտ.  
Վրան նայեց թագուհին,  
Մանր. ձանը հառաչեց

Ответ. по выпуску П. Чатыньян.

Техн. редактор Л. Жданович      Корректор М. Кеворкьян  
Обложка худ. Н. Филова

Изд. № 7|33. Сдано в набор 17 января 1938 г., подписано в печать  
22 марта 1938 г. Формат 82x108 32. Объем 11<sup>1</sup>/<sub>4</sub> п. л. Тираж 5150

Уполномочит № И-757 Типография Ростовского обл. армянского изда-  
тельства „Большевик“ (Ростов-Дон, Ворошиловский 27.) Заказ № 140



20807-59

Ու հուզմունքից խստագին  
Ճաշին ընդմիշտ նա ննջեց:

Արքան մընաց սգավոր.  
Նա ել մարդ եր մեղավոր.  
Տարին անցավ վոնց յերազ:  
Նա կին առավ դեռահաս.  
Բարձր, սիրուն, նազելի,  
Բայց բնույթը զըզվելի,  
Չար ու հպարտ, կըտըրտան,  
Կասկածոտ ու մըրթմըրթան.  
Ոժիտ ուներ լի ու լի,  
Հետն ել մի հատ հայելի:  
Պետք ե ասեմ ավելին —  
Խոսել գիտեր հայելին.  
Հետը ուրախ խոսում եր  
Ու զուքվելով ասում եր.  
— Ասա դու ինձ, հայելի,  
Ո՞վ կա ինձնից ավելի  
Արմադ-շարմադ, սիրելի:  
Հայելին խսկույն և եթ  
Խոսում եր թագուհու հետ.  
« Զկա քեզնից ավելի  
Արմադ-շարմադ, սիրելի»:  
Ու թագուհին հըռհոռում,  
Զույգ ուսերը ծըռմոռում,  
Քթի տակը մըռմոռում,  
Աչքերը ճը՝ տ. ճտտացնում,  
Մատներովը չը՝ տ. չտտացնում,  
Զեռքը մեջքին կանթ արած՝  
Կանգնում հայելու դիմաց:

Արքագնուհի աղջիկը,  
Հոտով վարդի փնջիկը,  
Հետզհետե ծաղկելով՝  
Մեծանում եր որերով:

Աչք ու ունքը սև սաթ եր,  
Լույսը դեմքից կըկաթեր.  
Դարձավ սիրունի փեսեն  
Իշխանազուն Յեղիսեն.  
Հոր մոտ զրկեց նա պատգամ.  
Արքան ասավ. « Հա, կտամ »:  
Ցոթը քաղաք, շատ դղյակ  
Տվեց ոժիտի տեղակ:  
Թագուհին առագաստում  
Իրան գուքում, պատրաստում  
Ու հայելուն նա ելի.  
— Ասա դու ինձ, հայելի,  
Ո՞վ ե ինձնից ավելի  
Արմադ-շարմադ, սիրելի:  
Հայելին թե, « Թագուհի,  
Լսիր, քեզնից ավելի  
Խորթ աղջիկդ ե սիրելի »:  
Թագուհին ե վեր թոշում,  
Խփում նրան ու ճշում,  
— Այ դու անպետք ապակի,  
Թո սրտիկը թող ճաքի.  
Դու ուղիղը չես ասում,  
Վրդովել ես ինձ ուղում,  
Այ թե ինչպես աճեց նա,  
Հարկե, սիպտակ կերեվա.  
Հղի մայրը մեն-մենակ  
Լուսամուտից շարունակ  
Զլունին ենքան ե նայել,  
Վոր աղջիկն ե սիպտակել.  
Բայց ինձ ասա դու ելի,  
Իմ աննման հայելի.  
Միթե յես չեմ դշխունը,  
Աշխարհի մեջ նշխունը:  
Պատասխանեց հայելին.  
« Խորթ աղջիկդ ե սիրելին »:  
Հոնց թե կծած սև ոճից,

Չար թագուհին նախանձից  
Են հայելուն մի բրթեց,  
Բոնեց մի կողմ շպրտեց.  
Ճաց, կանչեց նաժիշտին,  
Կանչեց բերեց իր կշտին.  
Ասավ. «Աղջի, քեզ հետ եմ,  
Թե չե մազըդ կրփետեմ.  
Խորթ աղջըկաս հետդ առ,  
Խսկույն և եթ տար անտառ.  
Կապի՞ր նրան ծառերին,  
Բաժին դառնա դալերին»:

Աստված պահի կնոջ հերսից,  
Սատանան եր խոսում ներսից.  
Հետք վիճել չեր կարելի,  
Մի կըրակ եր անմարելի:  
Նաժիշտն առավ վարդ դշխուհուն,  
Տարավ անտառ, այնպես հեռուն,  
Վոր աղջիկը բնկավ զլիսի,  
Արցունք թափեց աղի-լեղի  
Ու աղաչեց. «Հույսը, լույսը,  
Ի՞նչ եմ արել անմեղ կույսը.  
Դու ինձ խղճա, ինձ խնալի.  
Յերբ վոր դառնամ յես թագուհի,  
Կըկատարեմ քո բաղձանքը»:  
Նա ել լսեց աղաչանքը,  
Վոչ սպանեց և վոչ կապեց,  
Տեղը թողեց, տուն ըշտապեց:  
— Ի՞նչ, հարցըց չար թագուհին,  
Վորտեղ մնաց քո դշխուհին:  
— «Խոր անտառում, ասեմ ճիշտը,—  
Պատասխանեց ու նաժիտը,—  
Յես կապեցի զույգ արմունկից,  
Ել չի պրծնի դայլի ճանկից.  
Լավը ել են ե՝ չըտանջըկի,  
Խոր անտառում թող ջընջըկի»:

Հուըը հասավ վողջ աշխարհին,  
Թե կորել ե արքազնուհին:  
Թագավորը մնաց լալեն,  
Լալեն, լալեն, մղկըտալեն.  
Ու պատանի անբախտ փեսեն,  
Իշխանազուն են Յեղիսեն,  
Միրոզ սիրար հա տանջելով,  
Ով տեր աստված՝ հա կանչելով,  
Գնաց գտնի նշանածին:

Հիմի գնանք մենք կորածին.  
Մաղիկ, մաղիկ մղկըտալեն,  
Ես կողմ, Են կողմ վեր-վար տալեն,  
Մութ անտառը տվեց անցավ,  
Մի գոյակի նա մոտեցավ.  
Շունն հաջելով վրա վագեց,  
Մոտը գալով վոտը լիզեց.  
Թափառական հյուըը չքնաղ  
Սրան մտավ լուռ ու խաղաղ.  
Պատըշգամբը յելավ վախով,  
Դուռը բացեց յերկաթ ախով.  
Մտավ սենյակ, և վոչ մի շունչ,  
Չորս պատերը կանգնած են մունջ,  
Բայց տախտերին խալ-խալիչա  
Յեվ հատակին նախշուն քեչա.  
Մի անկյունում փայտե սեղան,  
Մի անկյունում մեծ վառարան:  
Տեսավ կույսը դատարկ տեղ չի,  
Բարի մարգկանց մոտ չի կորչի.  
Ու սենյակից զես-զեն մտավ,  
Ծաք ու ցրիկ ինչ վոր գտավ,  
Սրբեց, մաքրեց ու վեր քաղեց,  
Հնկած բանը տեղից կախեց,  
Ու սենյակի դուռը ախեց,  
Սրբի առաջ վառեց կանթեղ,  
Գնաց մտավ մի ծածուկ տեղ:

Ճաշի ժամին, մին ել ահա,  
 Բակը լցվան յոթն աժդահա.  
 Յոթով մտան սենյակը այն.  
 Մեծը ասավ. «Ես ինչ նոր բան  
 Ամեն ինչը արգի-կարգի.  
 Ո՞վ ե բերել տունը սարքի:  
 Ո՞վ ես, ո՞վ չես, առաջ արի.  
 Տեսնենք չմը ես դու, թե բարի.  
 Թե մի մարդ ես դու ալեվոր—  
 Մեր բիձեն ես դու պատվագոր.  
 Թե պատանի—ջիվան-ջահել—  
 Մեր ախպերն ես ախպոր վայել.  
 Թե ծեր կին ես—մայր յեղիր մեզ,  
 Մեզ ել վորդի արա դու քեզ.  
 Թե աղջիկ ես հուրիկ-բուրիկ—  
 Յեղիր դու մեզ անուշ քուրիկ»:

Յեվ գշխուհին յերեաց,  
 Մինչե զոտին խոնարհվեց,  
 Տան տերերին բարեեց,  
 Վարդի նըման կարմրեց.  
 Ներողություն նա խնդրեց,  
 Վոր անկոչ ու անծանոթ  
 Հյուր ե յեկել իրանց մոտ:  
 Խոկոյն խոսքից իմացան—  
 Դշխուհի յե աղջիկն այն.  
 Գորդի վրա նստացրին,  
 Գաթա, գինի հրամցըրին.  
 Թողեց գինին գավաթով  
 Ու գաթիցը, ամոթով,  
 Կարեց կերազ մի պատառ.  
 Հանգստանալու համար  
 Յոթն ախպորից հյուրընկալ  
 Խնդրեց նա մի մահճակալ:  
 Յոթն ախպորով միասին  
 Սենյակ տարան հյուր կույսին,

Թողին նրան մեն-մենակ՝  
 Քնի իրանց թևի տակ:  
 Որերն անցնում են կամաց,  
 Բայց դշխուհին նշանած  
 Յոթն ախպորանց դղյակում  
 Համ ծլում ե, համ ծաղկում:  
 Յեղբայրները խմբովի  
 Լուսաբացին՝ մի քովի  
 Գնում են միշտ ման գալու;  
 Վայրի բաղեր զարկելու,  
 Կամ թե թուրք մուրք փնտոելու  
 Յեվ գլուխը կարելու.  
 Հալածելու միասին  
 Պյատիգորսկի չերքեղին:  
 Յեվ դղյակի տիրուհին  
 Ինքն ե վոր կա դշխուհին.  
 Վառում, յեփում, պատրաստում,  
 Յոթի հետ սեղան նստում  
 Ու հակառակ չի խոսում,  
 Ջան ե ասում, ջան լսում.  
 Որերն եղան են հոսում,  
 Հերյաթն եսպես ե ասում:  
 Յոթն ախպորով վարդ կույսին  
 Սիրեցին. բարիլուսին  
 Սենյակ մտան միասին.  
 Մեծը ասավ. «Վարդի բույր,  
 Անվանել ենք մենք քեզ քույր.  
 Բայց սիրել ենք քեզ յոթով,  
 Մեզ մի անի ամոթով.  
 Դու մի թույլ տա, վոր կովենք,  
 Պատճառ գառնաս, մենք ցրվենք:  
 Յեղիր մեղնից մեկիս կին,  
 Մյուսներիս քույր անգին.  
 Գլուխդ ինչ ես դու շարժում,  
 Միթե ինձ ես դու մերժում,

Ընտրիր, վորս ե քեզ արժան»:  
 — Ո՛, դուք քաջեր պատվարժան,  
 իմ յեզբալըներ սիրասուն.  
 Ճիշտն եմ, ճիշտը ձեզ ասում.  
 Աստված պատժի թե ստեմ,  
 Տեղիս մեջ վողջ չընսանեմ.  
 Յես աղջիկ եմ հարսնացու,  
 Աւնիմ յես ինձ փեսացու.  
 Դուք շատ քաջ եք ու խելոք,  
 Ձեզ սիրում եմ յես ջոկ-ջոկ,  
 Յեղբայրներս եք հարազատ.  
 Թողեք խոսիմ յես ազատ.  
 Նշանածս ե, ձեզ ասեմ,  
 Իշխանազուն Յեղիսեն:—  
 Յեղբայրները խորհեցին,  
 Ծոծրակները քորեցին.  
 — Վոր եղպես ե, մեզ ներիր,  
 Քրոջ նման մեզ սիրիր.  
 Յես այդ մասին, ասեմ ճիշտ,  
 Ել չեմ խոսի, չեմ ընդմիշտ, —  
 Գլուխ տալով մեծն ասավ.  
 Կույսը տեղի մեջ խոսավ.  
 «Հա. չես ուզում, ախաղեր ջան,  
 Քույրըդ լինի գավաճան»:  
  
 Յոթն ախաղերը փեսացու  
 Թողին աղջիկն հարսնացու.  
 Սուսիկ-փուսիկ զնացին  
 Յեվ խոսքի տեր մնացին:  
 Բայց նենդամիտ թագուհին  
 Զեր մոռացել ցավը հին,  
 Նա չեր ներում դշխուհուն,  
 Վոնց իրանից նա սիրուն:  
 Բայց թե են ե ցավալին,  
 Գնաց գտավ հայելին.  
 Իրավ առջնն ու նստեց.

Իրան զուքեց, պատրաստեց,  
 Ժպտաց, ասավ. «Հայելի,  
 Ասա, ասա ինձ ելի,  
 Ո՞վ ե ինձնից ավելի.  
 Արմաղ-շարմաղ, սիրելի»:  
  
 — Գեղեցիկ ես, խոսք չկա,  
 Բայց անտառում մինը կա,  
 Յոթ ախաղերանց դղյակում  
 Անհայտ ծլում ու ծաղկում.  
 Նա յե քեզնից ավելի  
 Արմաղ-շարմաղ, սիրելի:  
 Ու թագուհին վեր թռավ,  
 Իր նաժիշտին ձեռք առավ.  
 «Վատահացար ինձ խաբել,  
 Խորթ աղջկաս չըկապել»:  
 Նա ել պատմեց յեղածը.  
 Թագուհին թե՝ «Չեղածը  
 Քո գլուխը կըբերեմ.  
 Քանի վողջ ե դշխուհին,  
 Վայը կըտամ քո որին»:  
  
 Մատաղ կույսը մի ջերմ որ,  
 Բապասելով յոթն ախաղոր,  
 Պատուհանում մանում եր,  
 Են ինչ գուան մեծ շունն եր,  
 Սաստիկ հաջեց, ու կույսը  
 Տեսավ՝ ուղվորը զուրսը,  
 Պաշտպանվելով շընիցը,  
 Ներս ե մտնում զընսիցը:  
 — Այ շուն, հանգիստ, ինչ ե, ինչ.  
 Սպասիր գու, տատի, ըիչ.  
 Կըլուեցնեմ յես գժին  
 Ու կըբերեմ քեզ բաժին,  
 Գոչեց վերից են կույսը:  
 — Իմ զավակս, իմ լույսը,  
 Շոնըդ ինչքան կատղած ե,

Աղքատ կուղե, վոր կըծե.  
 Յեկ ինձ մոտ.—կույսն ուզում ե  
 Հաց բերի. շունն հուզվում ե.  
 Պատշգամբին կպչելով,  
 Վոտներն ընկած հաջելով,  
 Թույլ չի տալիս աղջկան  
 Մոտենալու են կնկան.  
 Հենց պառավը դեպ նրան,  
 Հարձակվում ե հա վրան  
 Ինչպես կատղած, գաղաղած.  
 — Ես ի՞նչ հրաշք, կույսն ասաց,  
 Ես որ շունը ի՞նչ վատ ե,  
 Կարելի յե քնատ ե:  
 Բերեց հացը ցած նետեց,  
 Շանը մի կերպ խտրտեց.  
 Պառավի առավ ու ասաց.  
 «Աղջիկ, որհնի քեզ աստված,  
 Շունը վերև չի թողնի,  
 Ես ինձորը դու բռնի».  
 Ու մի խնձոր մեղրածոր,  
 Վոսկեզօծած, կարմրավուն,  
 Վեր ե զցում դշխուհուն:  
 Շունը վերևն ե զլում,  
 Կույսը ինձորն ե խլում:  
 «Շան հաջոցը քեզ ի՞նչ փույթ,  
 Աղամիյակս, անձանձրույթ  
 Եդ ինձորը կարմրախետ  
 Անուշ կանես ճաշից հետ».  
 Պառավս ասաց, հեռացավ,  
 Շունը նորից չարացավ,  
 Նա վազում ե, վազվզում,  
 Կոնձկոնձում ե, մըզմըզում.  
 Մին չոքում ե, մին պառկում  
 Յեվ սրտիցը խոր տնքում.  
 Ասել կուզե դշխուհուն՝  
 «Դեն շպրտիր»—Այ իմ շուն,

Եսոր քեզ ի՞նչ պատահեց,  
 Ասավ շանը ու շոյեց:  
 Հետո մտավ սենյակը,  
 Դրեց, փակեց դռնակը  
 Ու սկսեց նա բանել,  
 Պատուհանում կազ մանել,  
 Աբրեշումից թել հանել,  
 Ախարանց ճամբեն հա պահել,  
 Ալ խնձորին ծուռ նայել,  
 Խնձոր, խնձոր, ի՞նչ խնձոր,  
 Կտոտ, հյութոտ, մեղրածոր,  
 Հոտոտ-մոտոտ թարմ ու նոր,  
 Կարմրաթուշիկ, վոսկեհատ,  
 Կուտ ու կորիզ նոան հատ  
 Յերեկում են կեղիեց,  
 Նոր ե քաղած տերեվից:  
 Կույսը յելավ սրտամաշ,  
 Զըհամբերեց մինչե ճաշ.  
 Խնձորն առավ նա ձեռքին,  
 Մոտեցրեց շրթունքին.  
 Միքիչ կծեց ատամով  
 Ու կուլ տվեց խիստ համով.  
 Մին ել հանկարծ իմ կույսը,  
 Իմ հոգյակը, իմ լույսը,  
 Անձեն, անձուն, անբարբառ  
 Փովեց տեղը շնչասպառ:  
 Դալար կոներ թափվեցան,  
 Պայծառ աչեր փակիցան,  
 Վոսկե ինձոր գլորավ,  
 Նախշուն հասակ ճորավ.  
 Էնկավ կույսը նշանած,  
 Վոչ կենդանի, վոչ մեռած:  
  
 Յեղբայրները անտեղյակ  
 Գալիս եյին դեպ դլյակ  
 Որվա հաջող թալանից.

Մին ել շունը տան կողմից  
 Վրա պրծավ հաջելով.  
 Ու սորից տուն փախչելով  
 Կուգեր ասել՝ շուտ հասեք.  
 Ել մի, ել մի սպասեք.  
 Եր քաջերը վատ նշան  
 Հաշվելով հաջոցը շտն,  
 Սլացան, սենյակ լցիան,  
 «Ախ, վախ»: Շունը բարձրաձայն  
 Վրա պրծավ, չարացավ,  
 Խնձորը կերավ չորացավ.  
 Ել հետ չըգա եդ որը,  
 Թունավոր եր խնձորը:  
 Յոթ ախպերը ամենքով,  
 Հոգու սաստիկ հուզմունքով,  
 Քրոջ առաջ գլխակախ  
 Կանգնած եյին մտազբաղ.  
 Ու սրբազն աղոթքով  
 Բարձրացըին խնամքով,  
 Խաս-խաս շորեր հազցըին,  
 Հազցըին ու կապցրին,  
 Աղի արցունք մաղեցին,  
 Նրան թաղել ուղեցին.



Բայց մտքերը փոխեցին:  
 Խորը քնի թեփ տակ,  
 Ինչպես քնած հրեշտակ,  
 Կույսը անուշ եր ննջում,  
 Միայն, միայն չեր զնչում:  
 Յեղայրն երը յերեք որ  
 Սուգ նստեցին—սգավոր.  
 Բայց դշխուհին նախ նախշուն  
 Խոպոպները աբրեշում,  
 Իր խոր քնից չըսթափովեց.  
 Յերեք որը թամամվեց,  
 Դրին դագաղ բյուրեղյա,  
 Ու կարդալով «տեր-ուղղյա»,  
 Տարան նրան թափուր սար,  
 Սարի տակին մի խոր այր.  
 Շղթաներով կախեցին,  
 Յոթը սյունից մեխեցին,  
 Շուրջը ճաղեր տնկեցին,  
 Քրոջ առաջ չոքեցին,  
 Շունըր դըին յերկրային.  
 Խորհրդավոր եդ պահին  
 Մեծը ասավ.—այ չընաղ,  
 Զահել մտար դու դագաղ,  
 Զոհ գնացիր նախանձին.  
 Գեղեցկությունդ առանձին,  
 Յոթն ախպորով սիրեցինք.  
 Բայց քեզ փեսիդ պահեցինք.  
 Հիմի դու կաց այս վալրում,  
 Մութ ու մթին այս այրում:

Յեվ թագուհին նախանձուտ  
 Թե կըլսի մահվան բոթ,  
 Նորից առավ հայելին,  
 Իրա միակ սիրելին,  
 Ասավ.—ասա, հայելի,  
 Բոլորիցը ավելի

Միթե յես չեմ սիրելի:  
Հայելին թե՝ հա ելի,  
Չըկա քեզնից ավելի  
Արմադ-շարմաղ, սիրելի:

Նշանածին են փեսեն,  
Իշխանազուն Յեղիսեն  
Վողջ աշխարհն ե ման գալիս,  
Ման ե գալիս ու լալիս.  
Պատահողին հարց տալիս,  
Ասեք, ուր ե դշխուհիս,  
Ասեք, ուր ե նշխուհիս:  
Ով լսում ե, զարմանում,  
Վճրը հայտնի ծիծազում,  
Վճրը գլուխը կախում.  
Ու արեվին լույս յերես  
Դիմեց փեսեն վերջապես:


— Արե, արե, արեգակ,  
Աշխարհն առած թեկիդ տակ,  
Կոր տարին շարունակ  
Ման ես գալիս յերկնքով.  
Բա չի ընկել քո աչքով  
Իմ դշխուհին նորահաս,  
Յես փեսեն եմ անմուրագ:  
— Վոչ, չեմ տեսել, պատանի,  
Ինձնից կարծիք մի տանի,  
Գուցե նա չի կենդանի,  
Գուցե մի տեղ լումնյակը  
Տեսել ե քո հոգյակը:  
Յեղիսեն իր հուշերով  
Դիմեց լուսնուն դիշերով.

— Լուսին, լուսին, լույս յերես,  
Դու վոսկեզոծ յեղջյուր ես.  
Աչբդ խաժուժ, լուսաեջ,

Դու ծագում ես մթի մեջ,  
Քեզ աստղերը սիրելով  
Հա մնում են նայելով.  
Միթե խնդիրս ես մերժում:  
Մի տեղ ես լեն աշխարհում  
Զես տեսնլ իմ դշխուհուն,  
Նա իմ հարսն ե, յես փեսա:


Լուսին, լուսին, դեհ, ասաւ:  
Լուսինն ասավ.—Պատանի,  
Ինձնից կարծիք մի տանի,  
Գիշերները մութ-մթին,  
Յես ծագում եմ իմ հերթին.  
Յես չեմ տեսել դշխուհուն,  
Գնա դիմիը դու քամուն.  
Գուցե նա քեզ ճար անի.  
Գնաս բարով, մի կանգնի:  
Քամուն դիմեց Յեղիսեն.

— Կանգնի, քամի, քեզ ասեմ,  
Քամի, քամի կորովի.  
Հալածում ես խմբովի  
Են յերկնքի ամպերը,  
Հուզում, զիզում ծովերը  
Ու քո անուշ հովերը  
Տարածում ես անսահման,  
Դու հզոր ես անպայման,  
Դու չես վախում վոչոքից,  
Բացի, բացի են Մեկից:  
Միթե խնդիրս ես մերժում:  
Մի տեղ ես լեն աշխարհում  
Զես տեսել իմ դշխուհուն,  
Նա իմ հարսն ե, յես փեսա:



Են սարումը մի խոր այր,  
Են այրումը-խավարում,  
Բյուրեղ դագաղ որորվում.  
Շղթաներով ե կախած,  
Յոթը սյունից ե մեխած:

Քամին բացեց իր թեր.  
Տղան առավ սուդ-սեր.  
Լալով գնաց հեռացավ,  
Թափուր սարին մոտեցավ.  
Սարի շուրջը դատարկ վայր,  
Սարի ատակը մի խոր այր:  
Գնաց, գնաց մութ անցքով,  
Գնաց տխուր հայացքով.  
Գնաց գտավ մի դագաղ,  
Շղթաներով վերեց կախ,



Յեվ դագաղում—հա անշունչ  
իր գշխուհին վարդի փունջ:  
Վայր տալով իր գլխին,  
Վազեց կպավ դագաղին.  
Յեվ դագաղը բյուրեղից  
Հա փըշրվեց իր տեղից:  
Կույսը զարթնեց զարմացած,  
Շուրջը նայեց ու ասաց.  
— Ա՛խ, եսքան ել մարդ քնի,  
Իր գլուխը վեր դնի...  
Վեր բարձրացավ դագաղից  
Յեվ ինչ տեսավ ենտեղից.  
Վայ, յերազ ե, մուրազ ե,  
Ու լաց յեղան յերկուսով.  
Այրից յելան ու լուսով  
Հեռու ծայրից աշխարհքի,  
Ուրախ, զվարթ ձեռք ձեռքի,  
Սարեր, ձորեր շրջելով,  
Անուշ, անուշ զրցելով,  
Ինչպես յերկու աղունիկ,  
Յեկան հասան արքունիք.  
Լուրը հասավ աշխարհին—  
Կենդանի յե գշխուհին:

Հենց են պահին թագուհին  
Ելի առած հայելին,  
Հետը անուշ խոսում եր,  
Ծոմովելով ասում եր.  
— Ո՞վ կա ինձնից ավելի  
Արմաղ շարմաղ, սիրելի:  
— Դու չընալ ես, խոսք չկա.  
Խորթ աղջիկը, են ինչ կա,  
Նա յե քեզնից ավելի  
Արմաղ-շարմաղ, սիրելի:

Նորից հուզվեց թագուհին գրաշարը  
Տվեց վշրեց հայելին օս. Բնակութեա  
Հ. Ա. Մահմանա Անվանա



Դոնից ուղիղ դուրս թռավ  
Խորթ աղջըկան պատահավ,  
Սիրտը ճաքեց ու մեռավ:  
Հենց վոր նրան հողեցին,  
Խճրը, խճրը թաղեցին,  
Ըսկսեցին հարսանիք.  
Յերկու ջանել ջան. ջանիկ  
Պսակվեցին մուրազով,  
Դեռ աշխարհը յերազով  
Չեր տեսել եղախս խնձույք.  
Յես ել առա մեծ հաճույք.  
Ենքան գինի կոնծեցի,  
Լոկ բեխերս թրջեցի:



4925

9115  
Цена 25 коп.

911

А. С. Пушкин

Сказка о спящей царевне  
и о семи богатырях

(На армянском языке)

---

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ  
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО  
„БОЛЬШЕВИК“

Ростов-Д., Ворошиловский пр., 27